

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՒ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ
«ՅՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ» ԱՄՍԱԳՐՈՒՄ**

ԱՆԱՀԻՏ ԲՐՈՒՏՅԱՆ

Հայ մամուլի պատմության մեջ ուրույն տեղ ունի «Հյուսիսսփայլ» ամսագիրը: Հրատարակվելով հայրենիքից հեռու՝ այս պարբերականը, սակայն, եղել է հայրենիքի նվիրյալը և իր կարճատև կյանքի ընթացքում (1858-1864 թթ.) հանդես եկել ազգաշահ առաքելությամբ՝ գործունեության առանցքում պահելով «ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության» խնդիրները: Խմբագիր Ստեփանոս Նազարյանի և Միքայել Նալբանդյանի ու մի շարք այլ աշխատակիցների հայրենանվեր գործունեության շնորհիվ այն հաստատուն դեր ու կշիռ է ունեցել ոչ միայն ժամանակի հայ պարբերականների շարքում, այլև ընդհանրապես հայ հասարակական մտքի զարգացման գործում:

Պարբերականի հրատարակության ժամանակաշրջանում, առհասարակ XIX դարի երկրորդ կեսին, ազգային ինքնության պահպանման կարևորագույն խնդիրների շարքում հայ հրապարակախոսության ուշադրության կենտրոնում էին նաև ժողովրդական լուսավորության, հատկապես դպրոցական գործի կազմակերպման մի շարք հարցեր: Դրանք հիմնականում վերաբերում էին դպրոցի նպատակի, կրթության բովանդակության, գործադրվող մեթոդների, կառավարման, ուսուցչական կադրերի պատրաստման, սովորողների դաստիարակության և այլ խնդիրների: Ժամանակի մամուլը հաճախակի էր անդրադառնում դրանց, ծավալում քննարկումներ, հրապարակում տարաբնույթ, երբեմն իրարամերժ, հակասական կարծիքներ, որոնք բոլորը, սակայն, բխում էին ազգօգուտ գործ կատարելու նպատակադրումից:

Նշված ժամանակաշրջանում գաղափարական տարբեր ուղղվածության պարբերականները արևելահայ իրականության նշանակալից գործոններից մեկը համարում էին ազգային դպրոցը, որի հիմնական կոչումը ազգային ոգու պահպանումն էր: Մամուլի ուշադրության կենտրոնում հաճախ էին հայտնվում տարբեր կրթօջախներ: Հրապարակումներում ներկայացվում էին դրանց պատմությունն ու առօրյա գործունեությունը, քննարկվում էին դպրոցին ու կրթությանը վերաբե-

րող զանազան խնդիրներ: Պարբերաբար տպագրվում էին Ռուսաստանի, Եվրոպայի և Ամերիկայի կրթօջախները ներկայացնող թարգմանական հոդվածներ: Առանձին հրապարակումներ նվիրված էին Արևմտյան Հայաստանի և հայ գաղթօջախների ազգային դպրոցներին:

Վերոնշյալ խնդիրներն արտացոլվել են նաև «Հյուսիսսփայլ» ամսագրի էջերում: Ազգային մտածողության, կրթության և հայեցի դաստիարակության գաղափարներն այս պարբերականը ջատագովել է իր գործունեության ողջ ընթացքում:

«Հյուսիսսփայլի» հրատարակության առաջին տարվա առաջին ամսատետրակում հրապարակված «Հայկական լեզուի խորհուրդը» հոդվածում խմբագիր Ստեփանոս Նազարյանը մասնավորապես նշում է, թե «այդ օրագրի խորհուրդը պիտոյ է լինի հաստատել մեր ազգի մէջ մի հայկական գիտութիւն, որ չէ եղած մինչև այժմ. մի գրաւոր ճանապարհ խօսելու ազգի հետ նորա իմացական և բարոյական պիտոյքների վերայ. մի մատենագրական դպրոց ուր կարող է ամենայն փոքր ի շատէ բանիմաց Հայ ուսանել և ճանաչել մարդկութեան և աշխարհի որպիսութիւնը սկսեալ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը, ծանօթանալ իւր ազգային պատմութեանը և ճանաչել իւր յատուկ անձը իւր անցեալը, իւր ներկան, և սորանից գուշակել իւր ապագան»¹: Պարբերականի ազգանվեր գործունեության ծրագրում խմբագիրը կարևորում է նաև նրա դերը՝ լինելու «մի եղբայրօրէն ուսուցիչ, դաստիարակիչ և առաջնորդ բարեկամ Հայոց ծնողների»:

«XIX դարի 40-50-ական թվականներից սկսած՝ ինչպես ամբողջ Անդրկովկասի, այնպես էլ Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի են ունենում կարևոր իրադարձություններ: Խորանում է ֆեոդալական հարաբերությունների ճգնաժամը, վերանում է երկրամասի տարբեր նահանգների միջև եղած ինքնապարփակվածությունը, քաղաքները դառնում են աշխուժացող առևտրի և արդյունագործության կենտրոններ: Աստիճանաբար զարգանում են բուրժուական հարաբերությունները»²: Դրան զուգահեռ՝ առաջադիմում էր մշակութային կյանքը: Հայ մտավորականները և հասարակական գործիչները հանդես էին գալիս հայ մշակույթը զարգացնելու տարաբնույթ նախաձեռնություններով, մտահոգված ժողովրդի հոգսերով ու հետագա ճակատագրով՝ սոցիալ-տնտեսական բազմաթիվ հրատապ խնդիրների կողքին կարևոր տեղ էին տալիս դպրոցին ու լուսավորությանը, կրթությանն ու դաստիարակությանը, մշակույթին ու արվեստին վերաբերող հիմնահարցերին, որոնց լուծման համար առաջարկում էին ուղիներ, հայտնում կարծիքներ, դրանց կապակցությամբ բանավիճում մամուլի էջերում:

¹ «Հյուսիսսփայլ», թիվ 1, Մոսկվա, 1858, էջ 35: Այսուհետև շարվածքում՝ փակագծերի մեջ՝ տարին, թիվը, էջը:

² «Հայ ժողովրդի պատմություն», Եր., 1974, հ. V, էջ 7:

Դիտարկելով Ռուսաստանի և Կովկասի հայ մամուլի ընդհանուր վիճակը և բնութագրելով առանձին պարբերականներ՝ հայ մամուլի պատմաբան Հարոն (Նիկողայոս Տեր-Հարությունյան) նշում է, որ այդ հրատարակությունները դժգոհում են այն բանից, թե հայ հասարակությունը չի հետաքրքրվում սեփական գրականությամբ և ամենևին անհաղորդ է պարբերականների էջերում հայերենով տպագրված հոդվածներին: Մամուլի պատմագիրն այդ իրողությունը համարում է «հակահասարակական երևոյթ», որն ունի իր բնական պատճառները, որոնց «ճշմարիտ դարմանը», ըստ նրա, չկա ո՛չ նախկին և ո՛չ էլ տվյալ ժամանակաշրջանի պարբերական մամուլի էջերում: Նա միաժամանակ գտնում է, որ գանգատվելու փոխարեն հարկ է, որ մամուլն իր գործունեությամբ, իր ընտրած ճանապարհով և իր բովանդակությամբ հետաքրքրեր ու, եթե կարող էր, նաև օգուտ տար մեծ մասամբ օտար լեզվով խոսող հայ հասարակությանը: Այս առումով Հարոն առանձնացնում է «Հյուսիսափայլ» ամսագիրը՝ իբրև առհասարակ ազատամիտ ուղղություն ունեցող պարբերական, հակառակ մինչ այդ հրատարակվող լրագրերի ու ամսագրերի: ««Հյուսիսափայլը», կարելի է ասել, բավական ազդեցութիւն ունեցաւ հայ հասարակութեան վրա և շատերին դաստիարակեց: Նա ոչ թէ այնպիսի սաստիկ յարձակողական և մինչև անգամ հայիոյական ձևերով էր առաջ տանում իր գործը, ինչպէս որ անում են մեր այժմեան հայ լրագիրները, այլ, այո՛, թէև նոյնպէս յարձակողական, բայց ւաւելի ծանր, համոզեցուցիչ, կրիտիկական եղանակով՝ աչքի առաջն ունենալով հայ հասարակութեան դրութիւնը»³:

Հայ մամուլի պատմության մեկ այլ երախտավոր՝ Մ. Մխիթարյանը, «Հյուսիսափայլի» առաջին ամսատետրակները համարում է «XIX դարի կեսի արևելահայ կյանքի քաղաքակրթական նոր մակարդակի և ազգային կատարյալ հրապարակախոսության առաջին ծիծեռնակները»⁴: Իսկ «Հյուսիսափայլին» նվիրված իր աշխատության մեջ նա այն բնորոշում է որպես իր բովանդակությամբ «հանրագիտարանի բնույթի առաջին հայ ամսագիրը, որը մասսայականացնելով գիտության նվաճումները, փորձել է ժողովրդին դաստիարակել նոր ժամանակների ոգով»⁵:

Պարբերականն առանձնակի դեր է ունեցել հայ մանկավարժական մտքի առաջընթացի գործում: Այն հրապարակել է ոլորտի հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներ, որոնց մեծ մասի հեղինակները Ստ. Նազարյանը և Մ. Նալբանդյանն էին: Ստ. Նազարյանը համոզված էր, որ ժողովրդի փրկությունը կրթվելն է, որ դպրոցը և դպրոցական կրթությունը՝ իբրև ազգասիրության գաղափարներ կրող ու սերմանող, կարող են և պետք է հանդես գան որպես ազգափրկիչ

³ Հարոյ, Հայոց մամուլը Ռուսաստանում եւ Կովկասի մէջ, Թիֆլիս, 1878, էջ 47:

⁴ Մ. Մխիթարյան, Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը 19-րդ դարի առաջին կեսին, Եր., 1994, էջ 387:

⁵ Մ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Եր., 1958, էջ 3:

գործոններ: Հետաքրքիր է, որ ազգային կրթության զարգացման հարցում Նազարյանը մեծ ուժ ու հնարավորություն էր վերապահում հենց ժողովրդին. «Հայերը կարօտ են մի այնպիսի կրթութեան որ իւրեանց միջից, արմատից դէպ ի վեր և ազգային հիմքից գոյանար ու յառաջ գնար. և այս գործը պարտական է կատարել Հայոց ազգը ամեննին ինքնիշխան, իւր յատուկ ձեռքի վաստակով, առանց նիւթական օգնութիւն խնդրելու տէրութիւնից» (1859, թիվ 1, էջ 10): Այս համոզմունքով նա կոչ էր անում բոլոր հայերին՝ «մեծ ու փոքր, հոգևոր ու աշխարհական, ուսումնական, արհեստաւոր ու վաճառական», միաբանվել և միասնաբար խորհրդածել իրենց «ամենահարկավոր հոգալի բաների» մասին, որ, ըստ նրա, նախ և առաջ ազգային դպրոցն է տղաների և աղջիկների (առանձնացված) կրթության համար, բարեկարգ տպարանը և մի ընկերություն, որը կհոգա ազգային դաստիարակության և կրթության համար կարևոր մատենագրությունը (տե՛ս 1859, թիվ 1, էջ 11): Ազգային ինքնության պահպանման հարցում կարևորելով ազգային կրթության դերը՝ Նազարյանը իրավամբ գտնում էր, որ այն պետք է տալ հենց ազգային դպրոցում, որը կլինի նաև հայրենասիրության դաստիարակության հաստատություն: Վերջինիս հիմնադրման և գոյատևման հարցում Նազարյանը լուրջ անելիք ու դերակատարում էր սահմանում ազգային խնդիրներով մտահոգվողների համար: Ուստի նա գտնում էր, որ «այն առաջին ամենահարկաւոր բանը, որին այս րոպէիս մեր ազգի բարեմիտքը պարտական են ընծայել իւրեանց բոլոր ուշադրութիւնը, է մի ազգային ուսումնարան. և դորա գլխաւոր նպատակը լինելու էր միշտ կերպարանել և հաստատել մանուկ սրտերի մէջ մի առողջամիտ հայրենասիրութիւն» (1859, թիվ 1, էջ 13): Անշուշտ, ազգային կրթության, դաստիարակության և հայրենասիրության գործում Նազարյանը կարևորում էր մայրենի լեզվի դերը, երբ գրում էր. «Հայրենական լեզուի ուսումն պիտոյ է բաղկացնէ գլխաւոր հիմքը ազգային դաստիարակութեան: Ժողովուրդը պարտական է կատարելապէս ուսանել խօսել, զգալ, հասկանալ և մտածել իւր մայրենի լեզուով» (1859, թիվ 1, էջ 13):

Իր հերթին, Նալբանդյանը դպրոցի հիմնական դերը համարում էր հասարակ ժողովրդի լուսավորության գործին ծառայելը և նույնպես ընդգծում առանձնապէս մայրենի լեզվի ուսուցման նշանակությունը: «Մայրենի լեզվից և հայրենի հողից կտրված մանկան ուսումն ու դաստիարակությունը Նալբանդյանը համեմատում էր հարազատ հողից ու կլիմայից պոկված տունկերի ու կենդանիների վիճակին, որոնք նոր իրադրության մեջ փոխում են միանգամայն իրենց կերպարանքը»⁶:

Արժևորելով «Հյուսիսափայլի» դերը նոր գրական լեզվի զարգացման գործում՝ ամսագրին նվիրված իր աշխատության մեջ Մ. Մխիթարյանը գրում է. «Առաջին իսկ համարից «Հյուսիսափայլ»-ի խմբագիրը և աշխատակիցները» փորձում են գրել ժողովրդին հասկանալի

⁶ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Եր., 1955, էջ 162:

մի այնպիսի լեզվով, որ վերացներ հասարակ ժողովրդի և գիտության միջև եղած պատնեշները»⁷:

Դպրոցը ազգափրկիչ կարևոր գործոն է, ուստի դպրոցաշինություններ լուսավորության ուղին ընտրած ազգի համար հրատապ խնդիր էր: «Հյուսիսսփայլի» էջերում հատվածաբար տպագրվող իր «Հիշատակարանում» Նալբանդյանը նշում է. «Առաջին գործը է դպրոցների հիմնարկութիւնը, այս է մեր առաջին և վերջին ճանապարհը փրկութեան» (1859, թիվ 11, էջ 917): Այս առումով նա մտահոգություն է հայտնում էջմիածնում «մի օրինաւոր դպրոց» հիմնելու, Թիֆլիսի հոգևոր դպրոցի բարեկարգության, Աստրախանի նոր բացված հոգևոր դպրոցի ուսման վիճակի կապակցությամբ (տե՛ս 1859, թիվ 11, էջ 917):

Կրթության կազմակերպման գործում «Հյուսիսսփայլը» արժևորում էր նաև դաստիարակության դերը՝ դրան նվիրելով տարբեր հեղինակների հոդված-խորհրդածությունները, դիտարկումներն ու առաջարկները: Այս առումով ուշագրավ է պարբերականի մի քանի համարում շարունակաբար տպագրված «Դաստիարակութիւն» հոդվածը:

Դպրոցական դաստիարակության գործում մեծ նշանակություն տալով վարժությունների մեթոդին՝ հոդվածագիր Հարություն Համասփյուռը գտնում էր, որ երեխաները ամենից առաջ զգում են, քան հասկանում, ուստի նրանց պետք է սովորեցնել, ոչ թե ուսուցանել: Իսկ սովորությունը, որ ձևավորվում է երեխաների մեջ, և օրինակը, որին նրանք հետևում են, առավել զորեղ դաստիարակիչ հատկություն ունեն: Հեղինակը համոզված էր, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել վաղ տարիքից. «Յայտնի բան է, ինչ որ կը սերմանես, այն ևս կը բուսանի. ուրեմն հարկաւոր է աշխատել, որ նոր, անարատ և պտղաբեր հողի վերայ չընկնին որոմներ (անպիտան սերմեր)» (1858, թիվ 7, էջ 10): Իր խորհրդածություններում հոդվածագիրն առանձնացրել է մարդու կազմվածքի և դրանով պայմանավորված՝ դաստիարակության խնդիրը: «Բարոյական մարդը իւր բնաւորութեամբ և բոլոր հոգեղէն յատկութիւններով այնքան ևս ծնունդ է իւր ֆիզիկական և բարոյական շրջապատի, ինչքան հետևանք իւր մարմնեղէն կազմուածքի» (1858, թիվ 8, էջ 111): Ուստի թե՛ կրթության, թե՛ դաստիարակության հարցում, ըստ հեղինակի, պետք է հանդես բերվի զգուշավորություն և չափավորություն, որովհետև «մանուկը կարող է բնութենից ստացած լինել մի կազմուածք շատ բազմօրինակ ձգտողութեններով, որ միայն խնամատար դաստիարակութիւնը կարող է հաւասարակշիռ կացուցանել, չափաւորելով կամ ճնշելով միները և քաջալերելով միւսները. դորանից բացահայտ է ահա, որ ամենից յառաջ պիտոյ է նկատել և ուսումնասիրել այդ ձգտողութիւնը» (1858, թիվ 9, էջ 214): Եթե դաստիարակությունը մարդուն անհրաժեշտ է նրա ծննդյան օրվանից, ապա ուսումը, ըստ հոդվածագրի, պետք է սկսել այն ժամանակ միայն, երբ ե-

⁷ Մ. Մխիթարյան, «Հյուսիսսփայլ» ամսագիրը, էջ 91:

րեխայի ոչ միայն ուղեղը, այլև մարմնի կազմվածքը պատրաստ է դրան: Ուսումնառությունն սկսելու սովորական տարիքը այս առումով Համասփյուռը համարում էր յոթ տարեկանը և առաջարկում ուսուցանել դրան համապատասխան առարկաներ: «Հարկաւոր չէ ուսուցանել մանուկին այնպիսի առարկայք, որոնց մասին նոցա իմաստասիրութիւնը պատրաստված չէ, կամ թէ նորա մէջ ամենևին երևում չէ տրամադրութիւն» (1858, թիվ 9, էջ 214): Թեև և՛ տղաների, և՛ աղջիկների ուսումն սկսելու համար հեղինակն ընդունում էր նույն տարիքը և մինչ այդ նրանց դաստիարակության հարցում որևէ տարբերություն չէր տեսնում, այդուհանդերձ գտնում էր, որ իսկական ուսումն սկսելուց ի վեր (այսինքն՝ յոթ տարեկանից հետո) պետք է նկատի ունենալ աղջկա կազմվածքի առանձնահատկությունները և նրա ուղեղը չծանրաբեռնել այնքան աշխատանքով, որքան որ տղայինը: «Տղային հարկաւոր է վերլուծական մանրամասն գիտութիւն, իսկ աղջկան առարկաների ավելի մեծ մասի մէջ բավական է բաղադրականը, ընդհանուրը» (1858, թիվ 9, էջ 215): Անշուշտ, այս խտրականությամբ պարբերականը սահմանափակում էր իգական սեռի ոչ միայն կրթության հնարավորությունները, այլև նրա դերը հասարակության մեջ:

Դաստիարակության թեման հանգամանորեն դիտարկվել է Ս. Ավետիքյանի «Թէ ինչ է դաստիարակութիւնը» ծավալուն հոդվածում, որը «Հյուսիսասփայլում» տպագրվել է նույնպես հատվածաբար: Հեղինակը ընթերցողին նախ ներկայացնում է *դաստիարակել* հասկացության իր սահմանումը. «Դաստիարակել կամի ասել օգնական լինել մի մարդու, որ նա դառնայ այնպիսի, որպիսի չէ ի ծնէ, բայց ըստ իւր բնութեան կարող է դառնալ և ըստ իւր խորհրդին արժան է նորան դառնալ» (1861, թիվ 1, էջ 141): Ուսուցանող բնույթ ունի հոդվածում արտահայտված այն միտքը, որ ուրիշներին դաստիարակել ցանկացողը պետք է իր աշակերտներից բարձր մակարդակի վրա կանգնած լինի և ձգտի նրանց ևս վեր հանել, հասցնել որոշակի աստիճանի, ինչը, անշուշտ, նպաստում է նաև դաստիարակի ինքնադաստիարակությանը, որովհետև «միւսներին դաստիարակելով դաստիարակում ենք մեր անձը» (1861, թիվ 1, էջ 144): Քննելով «Թէ ինչ է մարդս իբրև նիւթ դաստիարակութեան» հարցը՝ հոդվածագիրը մարդկային կյանքը ըստ տարիքի բաժանում է երեք շրջանի՝ «կանուխ հասակ, միջին հասակ և վերջին հասակ»: Ելնելով այդ շրջանների առանձնահատկություններից՝ դաստիարակության համար լավագույն ժամանակը հոդվածագիրը համարում է «կանուխ հասակը»:

Թեմային անդրադարձել է նաև Գ. Թումայանն իր «Դաստիարակութիւն դէպ ի ճշմարտասիրութիւն» հոդվածում: Երեխայի դաստիարակության գործում հեղինակը կարևորում է մի շարք հատկանիշների, մասնավորապես ազնվության, արդարության, ճշմարտասիրության սերմանումը նրա մանուկ հոգում: Այդ հարցում որպես ուսանելի միջոց

նա ընդգծում է դաստիարակողի վառ օրինակը. «Բայց առաւել կարևոր և առաւել վճռական հնարը կենդանացուցիչ և զօրացուցիչ կերպով ներգործելու մանուկի ճշմարտասիրութեան վերա, այն է, որ նոյն ինքն դաստիարակիչը լինի նորան օրինակ մի անպայման ճշմարտասիրութեան» (1863, թիվ 1, էջ 49):

Արևելահայ պարբերական մամուլի էջերում XIX դարի երկրորդ կեսին քննարկվող բազմաթիվ խնդիրների շարքում որոշակի տեղ էր հատկացվում կանանց հարցին: «Հյուսիսափայլը» ևս մտահոգված էր կնոջ ազատության, իրավահավասարության, հասարակական դերի, կրթության ու դաստիարակության խնդիրներով և պարբերաբար տպագրում էր դրանց նվիրված հոդվածներ: Ու թեև այդ հրապարակումները հրատապ ու պահանջված էին, այդուամենայնիվ հոդվածագիրներից շատերը կնոջ լիիրավ ազատության հարցը սահմանափակում էին միայն նրա այս կամ այն իրավունքի հաստատմամբ ու պաշտպանությամբ: Այդուհանդերձ, «Հյուսիսափայլի» մոտեցումն այդ հարցին նոր էր, մյուս պարբերականներից խիստ տարբերվող: «Հետամնաց հայ իրակա-նության մեջ «Հյուսիսափայլ»-ը, հատկապես Նալբանդյանի շնորհիվ, վճռական բեկում է մտցնում կանանց հարցի նկատմամբ իշխող մտայնության մեջ»⁸: Անդրադառնալով հայ կնոջ անցյալի թշվառ վիճակին՝ Մ. Նալբանդյանը նշում է. «Ցաւելի է մեր ազգի դրութիւնը ընդհանրապէս, բայց մասնաւոր արտասուքի արժանի են հայոց կանայք: Խեղճերը բոլորովին անկիրթ և անդաստիարակ, համարեա թէ ապրում են մի միայն բուսական և շնչական կեանքով, իմացականի մասին գաղափար ևս չունին: Կարդալ, գրել ընդհանրապէս չգիտեն, շատ չնչին բացառութեամբ» (1859, թիվ 9, էջ 691): Մինչդեռ մեծ է կնոջ դերը ոչ միայն ընտանեկան կյանքում, այլև հասարակության մեջ՝ իբրև նրա լիարժէք անդամի: Հայտնի ճշմարտություն է, որ մայրն է երեխայի առաջին դաստիարակն ու նրան կյանքին պատրաստողը: Բայց ի՞նչ ակնկալիք կարելի էր ունենալ նման դաստիարակից, եթե նա ինքը կարոտ էր դաստիարակության ու կրթության: Այս առումով Նալբանդյանը հռետորական հարց է հնչեցնում՝ «ո՞վ կրթեց ու դաստիարակեց նորանց, և նոքա յուրեանց անընդունակութեամբ չլուսաւորվեցան կամ մնացին վայրենի հասկացողութեան վիճակի մեջ» (1859, թիվ 9, էջ 691), և ընդգծում, որ ժամանակն է, որ ազգի վերաշինության ու փրկության գործով մտահոգ ուսյալները մտածեն նաև այս բացը լրացնելու մասին: Աղջիկների կրթության ու դաստիարակության համար Նալբանդյանն անհրաժեշտ էր համարում բացել համապատասխան իգական դպրոցներ: «Նալբանդյանի համար կնոջ խնդիրը սերտորեն կապված էր նրա քաղաքական և սոցիալական ազատագրման խնդրի հետ: Ազատ կնոջ իրավունքները նա շաղկապում էր աղջիկների դաստիարակության, մաս-

⁸ Մ. Մխիթարյան, Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը 19-րդ դարի առաջին կեսին, էջ 143:

սաների ընդհանուր լուսավորության և ազգային-ազատագրական ընդհանուր պայքարի հետ»⁹, - գրում է Ա. Հովհաննիսյանը:

Աղջիկների կրթության և դաստիարակության խնդրին է անդրադարձել նաև ամսագրի թղթակից Մ. Միանսարյանը: Բարձրացնելով ժողովրդական դպրոցներ բացելու անհրաժեշտության հարցը՝ նա դիտարկում է *ազգային ուսումնարան* հասկացության վերաբերյալ «սխալ և նեղ» ընկալումները և առաջարկում. «Արդարև կարելի էր յօրինել մի առաջարկութիւն (պրօեկտ) որ համեմատ էր մեր ժամանակի տեսութեանը ազգային ուսումնարանների կառավարութեան մասին» (1861, թիվ 9, էջ 202): Այդ ազգային ուսումնարանները, ըստ հողվածագրի, պիտի լինեին աղջիկների համար ևս կարևոր, աղջիկները պետք է կապված լինեն այդ հաստատությունների հետ, իրենց ժամանակի մեծ մասն անցկացնեն այնտեղ: «Եթէ պետք էր, որ մեր հայ կնամարդը հիմնաւոր կերպով ստանար մի այդպիսի կրթութիւն, համեմատ նորա ճշմարիտ կոչմանը լինելու դաստիարակիչ կին և մայր, ապա նա իբրև աղջիկ պիտի բնակէր ուսումնարանի մէջ, կամ գոնեայ ըստ մեծի մասին գտանուիլ այն տեղ» (1861, թիվ 9, էջ 204):

«Հյուսիսսփայլի» էջերում արծարծված կրթության ու դաստիարակության թեմաները դիտարկելիս հնարավոր չէ շրջանցել մանկական խաղի՝ որպէս դաստիարակության հիանալի միջոցի դերին վերաբերող խորհրդածությունները: Այս առումով ուշագրավ է Ստ. Նազարյանի «Թէ մանկութեան խաղերը ի՞նչ խորհուրդ ունին» հոդվածը: Խաղը մանկան կյանքի կարևոր բաղադրիչներից է, որը հողվածագիրը դիտարկում է երկու տեսանկյունից՝ դաստիարակության և առողջության: Անտարակույս, երկուսն էլ չափազանց կարևոր են երեխայի զարգացման, մարդ-քաղաքացու ձևավորման գործում, որում մեծ պարտավորություն ունեն ինչպէս ընտանիքն ու շրջապատը (հասարակությունը), այնպէս էլ դպրոցը: Այս առումով հողվածագիրը նշում է. «Այն խաղերը մանկութեան, որ դպրոցը մանավանդ ունի իւր աչքի տակ առնելու, են հասարակաց խաղերը, ուրեմն այնպիսիք, որ պիտոյ է արձակ օդի մէջ կատարվին ըստ մեծի մասին. թէ այս գործը հասանում է նոյնպէս դպրոցական դաստիարակութեանը, հետևում է դպրոցի ընդհանուր խորհրդից» (1860, թիվ 11, էջ 376): Կարևորելով խաղի նշանակությունը մանուկների դաստիարակության գործում՝ Նազարյանը այն բնորոշում է իբրև ոչ միայն «մարմին զօրացուցանող և կերպարանագործող հնար, այլև միասին շատ մեծակշիռ, ուղղակի հոգի կրթող դաստիարակական հնարներ» (1860, թիվ 11, էջ 377): Նա միաժամանակ լուրջ մտահոգություն և վրդովմունք է արտահայտում առկա ցավալի մի երևույթի՝ հասարակական անտարբերության կապակցությամբ. «Հասարակութեան ատեանքը փոխանակ հոգածու լինելու մանուկների պատշաճաւոր,

⁹ Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 178:

բարեկարգ և հսկողութեան տակ դրած խաղատեղերի և մարմնաւոր կրթարանների համար, ազահութիւն են առնում հողաբաժնի մասին, և դորա գործադրութեան մէջ ուշադիր են ամենայն բանի, բայց ոչ մանուկների հարկաւորութեանը» (1860, թիվ 11, էջ 380):

Ամսագրում տեղ գտած մի շարք հրապարակումներում առաջարկներ էին ներկայացվում նաև ազգային դպրոցների գործունեության կազմակերպման, ծրագրերի մշակման ու բարելավման վերաբերյալ: «Ազգային մտածութիւնք» հոդվածում ընդգծելով, որ ժողովրդական դպրոցը «արմատն է ամենայն ազգային լուսավորութեան, ամենայն ազգային յառաջադիմութեան», ամսագրի խմբագիրը մտահոգություն է հայտնում դպրոցական կրթության կազմակերպման անկատարության կապակցությամբ: Ըստ նրա՝ հայաբնակ ասիական քաղաքներում կան զանազան կոչմամբ մասնավոր դպրոցներ, որոնց գործունեության ծրագրի, ուսուցման մեթոդների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդվում: Սա հեղինակը համարում է «պակասութիւն», ինչը որոշ հոգաբարձուներ փորձել են արդարացնել նրանով, թե իբրև չեն կամեցել իրենց գործունեությունը սահմանափակել: Իսկ դա, ըստ Նազարյանի, նշանակում է, որ ամեն մեկը կամենում էր գործել «իւր հաճոյքին և կամքին յարմար» (1863, թիվ 1, էջ 10): Ընդունելով այն փաստը, որ ժողովրդական դպրոցները կարող են գործել տարբեր հայաբնակ քաղաքներում, Նազարյանը գտնում էր, որ «գլխավոր խնդիրը մնում է միշտ մի կենտրոնական հայկական դպրոց իբրև մայր և ծննդարան միւս դպրոցների» (1863, թիվ 1, էջ 11): Նման դպրոցի անհրաժեշտությունը նա պայմանավորում էր ժամանակի թելադրանքով. «Ժամանակը պահանջում է Հայից նախ և յառաջ ընդհանուր կրթութիւն, մարդկային կրթութիւն, մշակութիւն և կերպարանագործութիւն բոլոր մտաւորական կարողութիւնների հաւասարապէս և դաշնակաւորապէս» (1863, թիվ 1, էջ 11): Եվ այդ մայր դպրոցի մէջ Նազարյանը կարևորում էր հայոց նոր լեզվի գերիշխանությունը, մատնանշում նաև զանազան առարկաների տեղը դպրոցական ծրագրերում, նշում ըստ դասարանների դրանց դասավանդման մեթոդների մասին (տե՛ս 1863, թիվ 1, էջ 13):

Կրթության ու դաստիարակության խնդիրները քննարկելիս «Հյուսիսսասիայը» կարևորում էր նաև որակյալ ուսուցչական կադրերի պատրաստման հարցը: Պարբերականն արդարացիորեն գտնում էր, որ դպրոցի հիմնադրումից առաջ պետք է մտածել անհրաժեշտ գիտելիք և դասավանդման հմտություն ունեցող մանկավարժներ պատրաստելու մասին: Դրա համար առաջարկում էր շնորհալի պատանիների ուղարկել եվրոպական մանկավարժական սեմինարիաներ՝ այնտեղ սովորելու համար: «Եթէ կամինք աշակերտներ ուսուցանել, ապա հարկաւոր է նախ և յառաջ պատրաստել, գոնեայ սկզբումը, բաւական թուով վարժապետներ, որ Եվրոպայում միայն կարող էին ստանալ հիմնաւոր տեսական ու գործնական մանկավարժական կրթութիւն վարժապետական դպրոցների մէջ»

(1861, թիվ 9, էջ 202),- գրում էր Մ. Միանսարյանը: Ժողովրդական դպրոցների ուսուցիչներ պատրաստելու գործում նա կարևորում էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի դերը՝ գտնելով, որ այն «պարտ է ջանադիր լինել պատրաստել և՛ արժանաւոր սպասաւորք Աստուծոյ սեղանի և՛ լուսաւոր, իւելացի հովիւք Հայոց քրիստոսեան հոտին և՛ արժանաւոր ուսուցիչներ ժողովրդական դպրոցների համար» (1861, թիվ 9, էջ 210):

«Հյուսիսափայլը» բարձրացնում էր նաև բազմակողմանի կրթության անհրաժեշտության հարցը, որպեսզի դպրոցը կարողանար պատասխանել ժամանակի պահանջներին: Հայ դպրոցների համար Նազարյանը կարևորում էր ինչպես մաթեմատիկական ու բնագիտական առարկաների, լեզուների, այնպես էլ Ռուսաստանի պատմության, աշխարհագրության, ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը: Դրանով հանդերձ՝ նա դպրոցական դաստիարակության գործի կազմակերպումը չէր պատկերացնում առանց կրոնի ուսուցման, առաջ էր քաշում անզամ հոգևոր ակադեմիա ունենալու խնդիրը:

Դպրոցական կրթության հաջող կազմակերպման գործում Նալբանդյանն էական տեղ էր տալիս բազմակողմանի ու հարուստ ծրագիր ունենալու խնդրին. «Այն ուսումնարանը, որ կարող էր լուսաւորութեան աւագան դառնալ մեր ազգի համար, պիտոյ է ուսուցանէր իւր աշակերտներին հայերէն, յունարէն, լատիներէն, ֆրանսերէն, գերմաներէն և ռուսերէն, ...» (1858, թիվ 8, էջ 166),- գրում էր նա՝ ներկայացվող ցանկում ընդգծելով նաև հայոց, ռուսաց և ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, ճշգրիտ և բնագիտական առարկաների ուսուցման անհրաժեշտությունը: Այդ հարցի լուծման համար Նալբանդյանը կարևորում էր նաև բարձրակարգ մանկավարժների պատրաստման խնդիրը:

Անշուշտ, մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ դիտարկել կրթությանն ու դաստիարակությանը վերաբերող բոլոր խնդիրները, ուրոնք արծարծվել են «Հյուսիսափայլ» ամսագրում: Սակայն միանշանակ կարելի է փաստել, որ այս պարբերականը ջանացել է իր հրապարակային գործունեությամբ նոր ուղի ցույց տալ և լույս սփռել այդ ոլորտների զարգացման համար:

Բանալի բառեր - կրթություն, դաստիարակություն, դպրոց, ժողովրդական լուսավորություն, մայրենի լեզու, հասարակություն, ազգային ինքնություն, հրապարակախոսություն

АНАИТ БРУТЯН – Роль образования и воспитания в оценке журнала “Юсисапайл”. – Издававшийся в 1858-1864 гг. в Москве журнал “Юсисапайл” («Северное сияние») занимал видное место в армянской периодике своего времени. Он многое сделал для расширения социального кругозора своих читателей. Подзаголовок «Юсисапайла» – «Ежемесячный журнал общенационального просвещения и воспитания» – ясно говорил, какие цели ставили перед собой издатели. И в самом деле, вопросы национальной школы, народного просвещения, обра-

зования и воспитания в самом широком смысле этих слов неизменно занимали в журнале центральное место. В условиях быстро развивавшихся новых экономических отношений первостепенное значение приобретало, как сохранить национальную идентичность, поэтому журнальные публицисты неустанно провозглашали школу очагом патриотизма. Среди учебных предметов, которые требуют особого внимания, неизменно фигурировали родной язык и армянская история. Не забывали в журнале и о таких насущных задачах, как обучение девочек, подготовка квалифицированных учителей и воспитателей, создание учебников и учебных программ.

Ключевые слова – образование, воспитание, школа, народное просвещение, родной язык, общество, национальная идентичность, публицистика

ANAHIT BRUTYAN – *The Value of Education and Instruction in “Hyusisapayl” Journal.* – The journal “Hyusisapayl” (published in Moscow in 1858-1864) had a significant role in the avant-garde press of the time and the development of Armenian social thought. Faithful to its title: “A daily journal about general enlightenment and education of the nation,” – this periodical had kept in its focus the problems concerning the organization of school activities, Armenian education, instruction, public education and so on during the whole period of its publication. In the circumstances of developing new economic relations and in terms of preservation and advancement of national identity the periodical emphasized the role of school considering it as the hearth of patriotic education that in its turn included the primary problem of native language teaching. The issues concerning the training of teachers, girls’ education, the creation of textbooks and educational programs, are carefully studied in “Hyusisapayl” journal.

Key words: education, instruction, school, people’s enlightenment, native language, society, national identity, publicity